

պաշտպանում է զանազան միջոցներով: Ռումինական և աւստրիական յայտնի անբարեացակամութեան առթիւ զէպի ուսմաներն աւստրիական պալատի Բուքովինայի պատգամաւորները պաշտպանելով սերբերին, չեխերին, խորվաճաներին, բոսնացիներին և հայացրին զաւանտրութեան նախարարին, որով հարցնում են. ե՞րբ և ի՞նչ միջոցով է մտադիր կարգի բերել Բուքովինայի ուստրիացիները և նրա հողէտրականութեան զրուծիւնը: Յօժանր է նա իրագործել Բուքովինայի Սէյմի 1900 թուի որոշումն, զիմնադրաների ուստրիականներից, որոնք կը ցանկանան յետոյ քահանայ լինել, որոշ թուով թոշակաւորներ պահելու:

ՀՌՈՄԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Սերբ. Յեժ.-ը (№ 1) «Պատմութեան արդի ձգտումները» վերնագրով տպել է իտալիայից պրֆ. Լեվիցիու թղթակառութիւնը, որ թարգմանաբար մէջ ենք բերում. «Լեոն ԺԳ. Մեծը» իւր համեստ և չը նախատեսուած յաջորդին ժառանգութիւն է թողել մի ծանր բեռ՝ հրատապ և ոչ զիւրեաւ մտնելի խնդիրներէ մի բեռ: Դրանց մէջ առաջնակարգներն են զրամական խնդիրը, Ֆրանսիական հատարակապետութեան հետ յարաբերութեան խնդիրը և վերջապէս Իտալիայում նոր եռանդ առած «քրիստոնեակրատիա» կոչուողն խնդիրի:

Բանից դուրս է գալիս՝ որ սաստիկ ժլատ և եկեղեցուօգտին յաճախակի յոբելեաններ սարքող Լեոն ԺԳ-ը Վատիկանի գանձարանը այնպիսի զրուծեան մէջ է թողել, որ իւր մահից միայն մի քանի ամիս յետոյ քիչ է մնում՝ որ Վատիկանը իրան սնակ հրատարակի: Մինչդեռ պապի մահից յետոյ հռչակուեց, թէ նա, զրկելով իւր ազգական գրաֆ Պեչչի տոհմը, ահագին զրամազլուխ է թողել եկեղեցուն:

Կարգինալներէ մէկն այս օրերս, Լեոն ԺԳ-ի մահուան 6-րդ ամսին ներկայացնում է Պիոս Ժ-ին 40 միլիոնի տեղ 20 միլիոն: Որպէս թէ Վատիկանում մշակները մի պահարանի մէջ գտել են 9 միլիոն ոսկի, ոմանք ասում են զրա կէտը. գրում են, հերքում են, մեկնութիւն են տալիս: Այդ բոլոր զրոյցներն էլ նսեմացնում են յիշատակն այն պապի, որ քիչ առաջ փառաբանուում էր ամեն բարեմասնութեամբ: Երկրորդ, այդ զրոյցներն եթէ նպատակ էլ չունենան, ի վնաս Վատիկանի կը սառեցնեն հաւատացեալներէ սրտերը, որ այնքան էլ տաք չէ «Ս. Պետրոսի

Լուսավոյն» նուիրաբերութեան գործում. այդպէս են դատում վատիկանի օրդանները և զրոյցները համարում են «թշնամիներն սարքած բարութանքներ՝ վնաս հասցնելու և առանց այն ևս դժուարացնելու ս. գահակալի ծանր դրութիւնը»:

Ննչից է այս տաղնապը. չի կարելի առել թէ՛ յօրելենական նուէրները վատահելի բնակարաններում չեն պահպանուել կամ յօրելեանների առիթով ծախսերից լինի. Պիոս Թ. էլ բնակարանի կողմից շատ բարեբաղդ չէր, նա էլ քիչ միլիոններ չէ թաքցրել թրքական գրամագլուխներէ մէջ, որոնք ռուս թուրքական պատերազմի պատճառով թուրքիայի սնանկութեամբ կորան, բայց Լեոն Թ.՝ Պիոս Թ.ից ժառանգեց ճոխ և կարգաւորեալ գանձարան: Լեոն Թ.ը 25 տարի «իմաստութեամբ և փառքով» իշխեց իւր նախորդի պէս: Բարգաւաճման (կուլտուրա) կռիւ չը մղեց, «ժողովներ» չէր կազմում, որոնք մեծ ծախս էին պահանջում... շատերին սրբերի դասը կարգեց. չորս յօրելեան սարքեց և չէր յոգնում անհամար ուխտաւորներ ընդունելուց՝ դիտաւորապէս «եկեղեցու միջոցները» բազմապատկելու համար: Ննչո՞ւ համար այս միջոցները չը բազմապատկուեցին, այլ ընդհակառակն, կրճատուեցին:

Այս հարցը անտեղի հետաքրքրութեան ծնունդ չէ՛, կամ ուրիշի գրպանը կրկտելու անհամեստ ցանկութիւն: ... Այ միայն պապական, այլ և ուրիշ շատ տէրութիւնները գանձարաններն էլ հարկազրուած են այժմ մաքառել անխուսափելի յորձանքի դէմ: Աճում են մուտքերը, բայց աւելի ևս աճում են ծախսերը: Եթէ աշխարհական պետութեան մէջ ծախսերի շատանալու պատճառը հակառակորդի դէմ առաջնութեան առիթով պատերազմական պատրաստութիւններն են, կաթոլիկ եկեղեցու մէջ էլ նոյնը չէ: Սա էլ կամենում է գերադանցել բոլոր եկեղեցիներին և կլանել նրանց, յատկապէս արևելեան եկեղեցին:

Այն 165 եպիսկոպոսական նոր աթոռները, որոնց հաստատութիւնը համարւում է Լեոն Թ.՝-ի մեծագործութիւններից մէկը, «արևելքում» բացած կոլլեգիումներով, որոնք կապուած են Լեոնի անուան հետ, և միսիօնարների վոհմակներով, որոնք գործում են ոչ թէ թուրքերի և հրէաների, կամ իրանց անհաւատներին՝ այլ անբաղդ շերցեղ—Բոսնիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, կաւէլացիներ և թշուառ Հայաստանում. թէև գրանք պատերազմական սպառազինութիւն չեն, բայց աւելի վատ են պատերազմական սպառազինութիւնից, որովհետև ջլատում են բարոյական ոյժերը, քրիստոնէական հաւատն ու սէրը, ազգերի խաղաղութիւնն ու եղբայրսիրութիւնը՝ մինչև

անգամ համարելն ցեղերի մէջ: Գատելով անցեալը, ո՞չ ապաքէն պատահական սպառազնութիւնն է և կը լինի այն պղտոր յորձանքը, որ արագաբար պէտք է կլանի պատահական միջիոնները: Քաղաքական աշխարհի ղինաթափութիւնից աւելի այստեղ շատ հարկաւոր և ցանկալի կը լինէր ղինաթափութիւնը, որ մարդկային կեանքը շատ կը թեթեւացնէր:

Այժմ ժամանակ չէ ս. դահի «արժանաւորութեան», իրաւունքների և գերագահութեան մասին» հոգալ, այլ աւելի բարձրի, աւելի թանկագնի և ընդհանուր փրկութեան մասին: Բայց ցարդ այդ ամենեւին չէ նկատուամ:

Վատիկանի դրամական անձիութեան պատճառներից մէկն է «Ս. Պետրոսի լուծայի» նուազելը: Պիոս Թ.ի օրով, նրա գերութեան առաջին տարիներում, լուծան առատութեամբ էր հանգանակուում և տարին 4 միլիոնի էր հասնում: Լեոն ԺԳ. -ն էլ լուծատանալու համար եղուիաների դործակցութեանը ապաւինեց, որոնք խոտացան տարեկան 3¹/₂ միլիոն, ճիշդ այնքան՝ որքան պէտք է տար իտալական կառավարութիւնը չնոմը գրաւելուց յետոյ, բայց պայքը չընդունեց՝ 1874 թ. «ապահովութեան» (гарантия) օրէնքի համեմատ:

«Բռնակալները» ձեռքից դրամաւոր նուէր չընդունելը՝ անկառկած ս. Գահի յարգը շատ բարձրացրեց: Բայց պատութիւնը վաղուց արդէն գերի էր եղուիաներին, նրանց ձեռքից դրամ ընդունելը աւելի ևս ամբացրեց իւր իսկական գերութեան կապանքը: Եղուիտ հայրերի տաղանդի և ուժի շնորհիւ անօրինակ շքեղութեամբ սարքուած ուխտագնացութիւնների ու յօրելեանների միջոցաւ բարձրացաւ պատութեան յարգը, բայց աճեցին ծախսերն էլ, իսկ լուծան սկսեց նուազել ու նուազել՝ մասնաւոր վերջին տարիներո: Ասում են, որ այն այժմ 3 միլիոնի էլ չի հասնում: Երկար ժամանակ առատութեամբ լուծայ տուողն էր կայսերական, թագաւորական, ազատամիտ-բուրժուազական, չափաւոր-հասարակապետական, պարզամիտ-հաւատացեալ և ռամիկ Ֆրանսիան: Բայց այս իսկ Ֆրանսիայի հետ խոհական Լեոն ԺԳ.-ը անհասկանալի նուրբ հաշիւներով, յարաբերութիւնը կարողացաւ այն աստիճան խճճել ու փչացնել վերջին ժամանակներս, որ այժմ այնտեղ յուղուած է ոչ թէ «Ս. Պետրոսի լուծայի», այլ կաթողիկոսութեան գոյութեան խնդիրը կամ նրան գոնէ ապահովող Կոնկորդատի խնդիրը:

Մենք չենք ուղում հանդուցեալ պայլին ու նրա խորհրդաձեաններին դատել ու մեղադրել նրանց վարած քաղաքականութիւնը «եկեղեցու անդրանիկ դասեր» (Ֆրանսիայի) հետ:

Անհնարին է չը զարմանալ այդ քաղաքականութեան տխուր հետեանքի վերայ: Հաճոյանում էին հասարակապետութեանը նրան դուրդուրում էին, իւր «անոխալականութեան» իշխանութեան ուժով պատուիրաններ էին աւանդում ընդորին՝ ընդունել հասարակապետութիւնը և պաշտպանել, բայց ահա, ինչպէս է հատուցանում այս յարգելի հասարակապետութիւնը.— արտաքուստ է վանականներին, փակում է եկեղեցիներն ու վանքերը՝ տաղաղալի վէճեր է յարուցանում թէ եպիսկոպոս նշանակելու փամանակ Բուլլաներում (պապական կոնգալ) պէտք է դրել nobis nominavit թէ պարզ կերպով nominavit, և բացարձակապէս անկրօնութիւն հրատարակում: Եւ այս բոլորը ուրացեալ-քահանայի (Կամբի) սարքելով, որն այժմ, քաջալերութեամբ ժողովրդեան երեսփոխանների ահագին մեծամասնութեան, կառավարութեան գլուխն է անցել: Իսկ որ ճակատագրի դառն հեղնութիւն, բայց ոչ տարօրինակ այժմեան կաթոլիկութեան վերաբերութեամբ:

Հենց նոյն ձևով էլ Պիոս Է. ը, որ վերահաստատեց կործանուած եզուիտութիւնը, մտածեց քաջալերել «Յայանութեան դադան» նապօլէոնին. պսակեց նրան կայսերական թագով, լուծեց նրա առաջին ամուսնութիւնը, դաշնակցութեան մէջ մտաւ նրա ուրացեալ նախարարի, երբեմն—եպիսկոպոս Տալէյ-րանի հետ. և ի՞նչ հատուցումն ստացաւ: Վիշտ, բռնութիւն, կոպտութիւն: Ի պատիւ այս Պիոսի է ներկայ պապը Պիոս կոչուել:

Ճշմարիտ է. եզուիտները մեծ կորսիկացու (նապօլէոն Ա.) կորուստը վերագրում են պապութեանը հասցրած անարդանքների համար աստուածային վրէժխնդրութեան. բայց, չէ՞ որ մինչև այդ նրանք էին, որ նապօլէոնին հրատարակեցին կրօնքի փրկիչ, սեղանների վերահաստատող և այլն ևն: Այդ նոր քաղաքականութեամբ էր ներշնչուած Լևոն ԺԴ: Եւ Ֆրանսիայի այժմեան կրօնական ըմբոստութիւնները եզուիտների և այն քաղաքականութեան պատճն են՝—օժանդակելու, հաճոյանալու, կեղծաւորութեան և ներքին իշխանասիրական ձգտման քաղաքականութեան: Մի ծխատէր Ֆրանսիացի քահանայ յայտնեց, թէ Հռովմում խօսում են, որ Ֆրանսիայի այժմեան հրդեհը բոլորքել են հայր եղուիտները և առաջինն իրանք վնասուեցին նրանից, թէ և ոչ շատ ծանր, որովհետև կաշոյղացան շատ ու քիչ բան թաքցնել ու դուրս տանել: